ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 06 » հուլիսի 2018 թ. N 140-Ա

ՏԻԳՐԱՆ ԱՐԱՄԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի, 84-րդ հոդվածի 1-ին մասի, 95-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. 2018 թվականի հուլիսի 6-ից, մինչև սահմանված կարգով մարզադպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի անցկացումը և տնօրենի ընտրվելը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Տիգրան Արամի Նիկողոսյանին՝ կնքելով ժամանակավոր աշխատանքային պայմանագիր:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ